ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԳՅՈՒՄՐԻ
ԹԻՎ 1 ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ ՓԲԸ.

РЕСПУБЛИКА РМЕНИЯ

З.А.О. № 1 ПОЛИКЛИНИКА

Г. ГЮМРИ

ՀՀ, ք. ԳՅՈՒՄՐԻ Շիրակացի 201
Հեռախոս /0312/52608

էլ.փոստpoliyclinic1gyumri@gmail.com

ելից 91 <<05>> հոկտեմբեր 2026թ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ՝
Դ. ԱՌՈՒՇԱՆՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Առուշանյան,

Տեղեկացնում ենք, որ 1924 թվականից «Գյումրու թիվ 1 պոլիկլինիկա» ՓԲԸ-ն իր գործունեությունն իրականացնում է Գյումրի քաղաքի Շիրակացի փողոցի 201 հասցեում գտնվող՝ համայնքի սեփականություն հանդիսացող շենքում: Շենքի օգտագործման վերաբերյալ 2012 թվականի հոկտեմբերի 2-ին կնքվել է վարձակալության վերջին՝ N19 պայմանագիրը: Պայմանագրի գործողության ժամկետի ավարտից հետո պոլիկլինիկան շարունակել է իր գործունեությունը նույն հասցեում՝ համայնքի կողմից առարկությունների բացակայության պայմաններում:

Տարբեր հանգամանքներով պայմանավորված՝ ձևավորվել է վարձավճարի գծով պարտավորություն:

«Գյումրու թիվ 1 պոլիկլինիկա» ՓԲԸ-ն իր երկարամյա գործունեության ընթացքում կարևոր դեր է ունեցել համայնքի բնակչության առողջապահական սպասարկման գործում: Ներկայումս պոլիկլինիկան սպասարկում է շուրջ 14.200 բնակչի, իսկ հաստատությունում աշխատում է 60 աշխատակից:

Միաժամանակ ցանկանում ենք ընդգծել, որ 2022 թվականի մարտի 10-ին Գյումրի համայնքի ավագանու կողմից ընդունվել է համապատասխան N37-Ա որոշում՝ պոլիկլինիկային շենքը անհատույց տրամադրելու վերաբերյալ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ խնդրում ենք քննարկել «Գյումրու թիվ 1 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի վարձավճարի գծով ձևավորված պարտավորությունների կարգավորման հարցը:

Մասնավորապես, «Գյումրու թիվ 1 պոլիկլինիկա» ՓԲԸ-ն պատրաստակամություն է հայտնում մինչև 2022 թվականի մարտի 10-ը ձևավորված վարձա վճարի գծով հիմնական պարտավորությունները կատարել :

Միաժամանակ խնդրում ենք,հնարավորության դեպքում զրոյացնել մինչև այսօր հաշվարկված բոլոր տույժերը և տույժերի գծով առաջացած պարտավորությունները:

Բացի այդ, խնդրում ենք զրոյացնել 2022 թվականի մարտի 10-ին Գյումրի համայնքի ավագանու կողմից շենքը անհատույց տրամադրելու վերաբերյալ որոշման ընդունումից հետո ձևավորված վարձավճարի գծով պարտավորությունները, քանի որ պոլիկլինիկան, հիմք ընդունելով նշված որոշումը չի կատարել վարձավճարների վճարումը:

Միաժամանակ խնդրում ենք,հնարավորության դեպքում զրոյացնել մինչև այսօր հաշվարկված բոլոր տույժերը և տույժերի գծով առաջացած պարտավորությունները:

Բացի այդ, խնդրում ենք զրոյացնել 2022 թվականի մարտի 10-ին Գյումրի համայնքի ավագանու կողմից շենքը անհատույց տրամադրելու վերաբերյալ որոշման ընդունումից հետո ձևավորված վարձավճարի գծով պարտավորությունները, քանի որ պոլիկլինիկան, հիմք ընդունելով նշված որոշումը չի կատարել վարձավճարների վճարումը:

Միաժամանակ խնդրում ենք, հիմք ընդունելով 2022 թվականի մարտի 10-ի ավագանու որոշումը, վերջնականապես կարգավորել Շիրակացի փողոցի 201 հասցեում գտնվող շենքի անհատույց օգտագործման հարցը և անհատույց տրամադրել «Գյումրու թիվ 1 պոլիկլինիկա» ՓԲԸ-ին:

Հուսով ենք, որ հաշվի առնելով պոլիկլինիկայի երկարամյա գործունեությունը, համայնքի բնակչության համար մատուցվող առողջապահական ծառայությունների կարևորությունը և սպասարկվող բնակչության թիվը՝ մեր խնդրանքը կարժանանա Ձեր դրական արձագանքին:

<<Գյումրու թիվ 1 պոլիկլինիկա>> ՓԲԸ

Տնօրեն՝ Խ. Գալստյան